

# ՀԱՉԱԿ

Բ Ա Յ Ա Տ Ը Ո Ւ Թ Ի Ի Ն .

Վերջերս Կ . Պօլսոյ մէջ տեղի ունեցած կարեւոր  
անցքերն վերաբերութիւն ունենալով միմիայն «Հնչակեան  
Յեղափոխական Կուսակցութեան» հետ՝ հարկ կը դրոշմ  
ի պաշտօնէ ինչ ինչ կէտեր պարզել հայ ժողովրդեան .

Ասկէ տուա՞ծ թիւք կատարարութիւնը Կ . Պօլսոյ  
Հնչակեան Մասնախումբի գլխաւորները գիտնալու  
համար, բոլոր զ ա պ թ ի Ն ե ռ ու , փ ո լ ի ս ն ե ռ ու ,  
ք ա ն ո ն ն ե ռ ու , խ ա ծ ի Ն ե ռ ու , թաղապետական  
ու քաղաքային մեծ ու փոքր պաշտօնեայներու և շահա-  
խնդիրներու, միով բանիւ՝ հ ա մ ի տ ե ա ն կուսակցու-  
թեան բոլոր անդամաց պատուէր տուած էր լրտեսութիւն  
ընել խոստանալով պատուանշան, չքանչան և լիաւատ  
փարձողութիւն : Բայց դարձեալ ոչինչ չպիտի կարենար  
գանել, եթէ քանի մը շահախնդիր ետամուկ հայեր, քանի  
մը սուտ աղաւթի և կուսակցական ոգւով թունաւոր-  
եալ վատեր մատնութեան պիղծ գերը չկատարէին :  
Այդպէս թիւքը առ այժմ թող պարծին իրենց քաջագոր-  
ծութեամբ և հանգչին իրենց գափնիքնու մէջ . Հնչակեան  
Կուսակցութիւնն ալ իւր կողմէ վաղ կամ ունաղան կը  
պատկէ զանոնք իրենց տրժանաւոր փարձողութեամբ . . .

Հնչակեան Մասնախումբն իւր գործի ձեւնարկած  
փայրակնէն քնականաբար աչքն տուած էր՝ այդ մատնու-  
թիւնները, այդ ամեն ձախորդութիւնները, որովհետեւ  
նա գիտէր թէ հայ տարրը՝ երկար ժամանակ խառնուե-  
լով ու չփոխելով տիրող թուրք տարրին հետ, մասամբ  
ստրկացած ու վատթարացած և անոնց մոլութեամբ  
չաղախուած է և թէ հետեւաբար այդ ամէնը պիտի  
պատահէր . այդ ամէնը միայն յատկապէս շին երբեք :  
Միւր սկսած մարտը միայն թիւք կատարարութեան  
դէմ չէ . այդ շահ գիւրն կլինէր . այլ միանգամայն  
ազգին մէջ տարրացած ու շաղախուած մոլութեանց դէմ,  
հայ մատնիչներու և լրտեսներու, գաւառաններու ու  
դասակներու, ազգութացիներու և սուտ ազգասէրներու,  
բաղդախնդիրներու դէմ, տհա՜ հայ յեղափոխական գործի  
փափկաբոյն և դժուարաբոյն մասն . միայն Հնչակեանք  
են որ էապէս պատերազմ հրատարակած են հայութեան

բոլոր թշնամեաց դէմ միանգամայն . ուստի և զարմանալի  
չէ որ այս դժուարակնծիւն գործի մէջ, այս ստակալի  
մարտին մէջ ունենայ իւր զոհերը, իւր կորուստները :

Իսկ ձերբակալելոց մասին առ այժմ ոչինչ կը  
գրեմք, սպասելով օսման համար պատարանի տալիք վճռոյն :

Գործին օտար վտու մարդկանց այդ մատնութեանց  
երեսէն վերջերս տեղի ունեցած բազմաթիւ ձերբակալու-  
թիւնք և մի քանի յայտնութիւնք ժողովրդեան վրայ տարբեր  
տարբեր ազդեցութիւն կը գործեն . մենք կը տեսնենք  
այդ : Ժողովրդեան մեծամասնութիւնը կը յուզուի, կը  
ցնցուի, զգալով թէ արեւմտ ազգին ստուար ընդհանրու-  
թիւնն է որ ընդգրկած է յեղափոխական գործն,  
բարձրացուցած է յեղափոխական գրօն և հետեւապէս  
թէ՛ անընկճելի է յեղափոխական կազմակերպութիւնը որ  
ունի հետեւողաց լիզէններ և անոր գալչելը՝ գործ  
գտանգաւոր . . . Բայց կան ոմանք ալ որ տեսնելով  
ձերբակալութիւնքը, յայտնութիւնքը, միջնադարեան տան-  
ջանքները՝ կը սարսափին և կը թերահաւատին . մենք  
այդպիսեանց այլ ևս խօսքով համոզում ներշնչել ու  
հրաւիր կարգալ տալորդ կը համարինք . հարկ չինք  
դատեր բացատրել թէ ո՞ր տարիճան ամուր սխներու  
վրայ լինած է յեղափոխական կազմակերպութիւնն  
Անոնք որ զաղափար ունին մեր կազմակերպութեան  
ձեւին վրայ, արդէն աղաչով են թէ՛ եթէ նոյն իսկ օր  
մը գործին զեկաւարութիւնը ի ձեռին ունեցող բոլոր  
գլխաւոր գործիչք ձերբակալուին, դժուար դարձեալ կը  
մնայ կանգուն . դի մեր կազմակերպութիւնը ինքնաբերա-  
բան մը չէ, այլ իւր խաբիւսն է ժողովուրդը . . . մին  
կանցի, մի լատաղոյնը կը յաջորդէ և կազմակերպութիւնը  
կըմնայ կանգուն և անքակտելի : Եթէ հայ ժողովրդեան  
մէջ հարիւր հնչակեան մնայ, հիսուն մնայ, տասը մնայ  
անգամ՝ այդ թիւն ինքն ըստ ինքեան բաւական է  
Ռոմանցան Տէրութեան զլիտն անխուսափելի փարձանք  
ու պատուհաս լինելու համար : Թուրք լրագիրք զմեզ  
կոչեցին մի քրք ու պ . ք . մենք կընդունենք այդ անունը .  
յեղափոխական մի քրք ու պ ն փակած ու բազմապատ-  
կուած է թիւքից մարմնոյն վրայ և մտած է իւր  
ազգեաց մէջ, իւր ոսկերաց ծածկն մէջ, կը կրծէ ու կը

սպասել, պիտի դիմենացնել ամբողջ մարմինն և ինքն է անյաղթելի Այսու ամենայնիւ, թո՛ղ ընթերցողք կարեն որոթիւն չընծային մեր խօսքերուն, մինչև որ գործերն պան դիրենք համոզեն:

Հայ ժողովուրդ, մի վճատիր տեսնելով թէ կան տակաւին քու ծոցիդ մէջ լրտեսներ, մատնիչներ, դատաճանք: Նոցա երեսն, իրաւ, ձերբակալութիւնք շտոցան և քու հարազատ զատկներդ կը տառապին բանաթ ու տանջանաց մէջ. բայց այդ դատաճանք ու մատնիչք անպատիժ չպիտի մնան: Հնչակեան դատարանն այժմ կգրաւի անոնց դատաւարանով. իւր քննութեանց արդիւնքն պիտի հրատարակուի ի մօտոյ „Հնչակի“ մէջ. „Հնչակ“ պիտի հրատարակէ մատնիչներու, լրտեսներու, դատաճանքներու, միով բանիւ սուրբ գործին մնաստակար եզոյ անձանց ցանկը: Թո՛ղ գիտնան այնպիսիք որ Հնչակեան կազմակերպութեան պատկանող ամէն անձ լաւ կը ճանչնայ իր պարտականութիւնք: Թո՛ղ չկարծեն մեր թնամիք թէ հայ յեղափոխականք իրենց բոլոր կրցածն ըրին. ո՛չ. դեռ շատ բաներ նորա պիտի անեն: Մօտ ազագան ցոյց կուտայ: Խեղճ թիւրք կոռուարութիւնը թող յուսայ թէ զմեզ պիտի ընկճէ լռնութեամբ. ողորմելի Նազըմը՝ որ խոտապցած է սուլթանին յեղափոխական միութիւնն արմատէն ջնջել՝ թող յիշորտանօք յայտարարէ թէ „արթըգ պիթի“ (ա՛լ լինցա) պատերազմը դեռ նոր ենք սկսած: Միւս կողմէ՝ թող մեր հակառակորդ հայ դատարկաբօս թերթեր ու խմբակներ ճեղդիտական ոճով, նախանձէն կուրացած հնչակեանց ղեմ խօսին, նորա տակը փոս փորելու ճիգով: Սոցա հեռ մօտերս հրապարակաւ լրագրութեան միջոցով մենք մեր հաշիւնին կը տեսնենք:

Վերջերս ոստիկանութիւնը Քէպէճի Խանի մէջ խուզարկութիւնք կատարելով՝ գետնի տակ պահուած հիւսանի շափ պայթուցիկ ուսմբեր գտեր է որք բոլորովին նոր սնով շինուած են և եթէ գետին նիստին 50 փամփուշտ կարճակեն այլ և այլ ուղղութեամբ. ոստիկանապետ Նազըմ պէլը անձամբ փորձը կատարել է և սքանչելի կերպով յաջողել է. նաև ձեռք անցած է մի նորահնար զինուորական գօտի որ մէկ անգամէն բազում փամփուշտներ կարճակէ ամէն ուղղութեամբ: Թուրք կառավարութեան յարաջուան խառութիւնք և անհանդուրժելի ճնշմունք տարբեր արդիւնք մը չէին կարող յառաջ բերել, և եթէ իրաց միճակն այսպէս շարունակէ, արդեօք դեռ ինչի՞ր չպիտի պատրաստէ իւր գլխուն թիւրք բռնապետութիւնը... Հարահատ ու սարսափաւհար կառավարութիւնը՝ կա՛մ իւր ազդեցութեամբ և կա՛մ գիտմամբ՝ հայ յեղափոխականաց ընթացքն ու գործունէութիւնը եպիթելի ցուցնելու համար յաշս խորագիր կատարարու-

թեանց, այդ գտնուածներուն յաին ամի գ անունը տուած է և նիշիխաններու ձեռքէ եկած: Տիւն ամիթ ճարելը թերեւ հայ յեղափոխականաց համար տելի գիւրին բան մը լինէր, եթէ ուզէին. բայց խնդիրն այն է որ այդ պայթուցիկ գործիքները տիւն ամիթ չեն պարունակել և ամենեւին նիշիխաններու գործ մը չէ. այլ հայ ու մը գն հատելի նոր գիւտ մ'է այն: Այս գործիքներու յայտնութիւնը բոլոր մայրաքաղաքիս մէջ մեծ ցնցում յառաջ բերաւ. եւրոպացիք անգամ մը հասկանան որ եթէ թուրք կառավարութիւնն հայ ժողովրդեան գոհացում չտայ, գեռ շատ բաներ պիտի պատահին, դեռ շատ սոսկալի եղելութիւնք տեղի պիտի ունենան: Սուլթանը լուրը տեսնելուն պէս սառեր մնացիւ է. սարսափէն նոյն ուրբաթ օրը չհամարձակեցաւ Ալեքսանդր արարագութիւն կատարել. ՆԱԸԹԳԻ պալատին ներքնագոյն խորշերուն մէջ կծկուած ու պահուեալ է իւր զանդիրտի բռնաւորն և իրեն ամենէն հաւատարիմ պալատականք անգամ չեն գիտեր թէ պալատան ո՛ր սենկին մէջ և ո՛ր անկողնոյն մէջ կը ննջէ... և արդեօք կը ննջէ... Թո՛ղ գիտնայ բռնաւորը թէ քանի իւր խառութիւնը շտանան, քանի քրքրէ ու խուղարկէ, այնչափ աւելի առիթ պիտի ունենայ զարմանալու յեղափոխական կազմակերպութեան հուժկու զօրութեան և հայոց անընկճելի ոգոյն մրայ, այնչափ աւելի պիտի հարկադրուի ծակ ու ծուկ փնտռել—կը լսեմք թէ շատ մը հայ ձուլիչներ ձերբակալուած են այս ուսմբերուն կեղծք թափած լինելու ամբաստանութեամբ. կըսուի նաև թէ այդ ձուլիչներէ մին խոտափաներ է թէ ինքն է այդ կեղծք թափողը: Բայց այս խօստովանութիւնն արժէք չունի. պաշտօնէից դարձուածոց արդիւնք է սուլթանի առատ ոսկիները կորցելու նպատակաւ իսկ մենք կը յայտարարենք թէ այդ նոր գիւտի հիղինակը որ ձուլիչի օգնութեան կարօտ չէր, շնորհիւ վեհափառ սուլթան թանի և իւր ոստիկանաց հսկողութեան ազատ է:

Մի քանի խօսք ալ թիւրք դատարանաց և ոստիկանութեան նենգութեան մասին. Սուրխասի տեսորին դատաւարանը արդէն ծանօթ է անոնց որք կարգացին „Արեւելք“ բայց պէտք է ըսել թէ այդ դատաւարութեան եղանակին մէջ ևս շատ անկանոնութիւնք և անիւրաւութիւնք, շատ խեղաթիւրումներ եղան՝ գործը տարբեր երևոյթով ներկայացնելու: Այդ դատաւարութեան գրասիր պատճենը թիւրք կառավարութեան ձեռամբ խմբագրուած է, որպէս մեր վերջին Յայտարարութեան մէջ ծանուցած եմք հասարակութեան: Այժմ որ աւելի լինի այդ քննադատելի կէտերը մանրամասն երևան

բերել. բաւական է որ խակական իրողութիւնը որմէ կրնանք բաղդատելով գտնել այս դարձումները՝ Հնչակեան դատարանի առջևն է արդէն. միայն թէ հայ ժողովուրդը թող միամիտ չլինի ու չխարուի:

Փաստարան. մատենի. Խաչիկի սպանութեան գործին յաջորդ օրն իսկ՝ թուրք ոստիկանութիւնը՝ իւր ծանօթ աշարժութեամբ Կարապետ Կարապետի և Արապետ Կարապետի հայեր՝ յայտարարելով թէ նոքա են ոճրին հեղինակք. առկէ ի վեր չա՛տ ձերբակալութիւնը եղան, Արապետներ ու Արապետներ ձերբակալուեցան, զի համարակ լրտեսներ այդ անուանց կը վերագրէին գործը, բայց ո՛չ մին էր բուն առաջնորդ իսկ: Այժմ թուրք ոստիկանութիւնը ձերբակալելով զԱրապետի, ի դուր այն երևայթը կուտայ թէ գտած է բուն սպանողը և թէ դառնալով վաճառքի է եղել. բայց մենք կը յայտարարենք թէ Արապետ չէր որ սպանեց Խաչիկը. կոտորածի թուրք պարծի իւր ճարպիկութեան վրայ մինչև որ վերստին խայտառակուի և յուսախար լինի. իսկ անգին բուն գործը կատարող հերոսը՝ չնորհիւ Կարապետ Կարապետի աշարժութեամբ և իւր զօրով է և իւր քրտին տակէն կը ծածկուի:

Ուրեմն մի սարսափելի, հայեր. գիտցէք որ յեղափոխականները՝ հակառակ ամեն հողմոց և փութորկաց՝ իւր գործն յառաջ կը վարէ անվաճառ. դու, հայ ժողովուրդ, արհամարի թուրք կառավարութեան շանթերը, բանտերը, տանջանքները. նոքա քու վրայ ոչ թէ վնասութիւն, այլ կատաղութիւն պէտք է բերին. դու օգտվէ թուրքի խտրութիւններէն՝ աւելի յանդուգն այլ աւելի ծածուկ գործելու, աւելի եռանդուն, այլ աւելի կարգապահ լինելու. ետ դառնալ կարելի չէ. վատի և թուլամորթի գործն է այն և ո՛չ թէ հայու. յառաջ, հայեր, պիտի բռնենք ու բարձրացնենք Յեղափոխութեան կարմիր դրոշակը. յառաջ, — յեղափոխութեան մէջ է միայն մեր փրկութիւնը. յեղափոխութեամբ պիտի ստանանք Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնները:

Կը մօտենայ կարմիր օրը և նորէն կը կրկնենք մենք՝ յառաջ:

Կեցցէ՛ Հայ Ժողովուրդ.

Կեցցէ՛ Հայ Հնչակեան Կուսակցութիւն:

Հնչակեան Յեղափոխական Մասնախումբ

Կ. Պոլսոյ:

Կ. Պոլսոյ, 5 — 17 նոյեմբեր 1890.

Թ Վ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ն Ն Ե Բ .

ՆԱԽԱԿ ԹԻԻՐԲԵՍՈՒՅ .  
(Սեփական թղթակցից)

Կ. Պոլսոյ, 13 — 25 նոյեմբեր 1890.

Թուրք կառավարութիւնը մոլեգնած և իւր կարծեցեալ յաջողութեամբ արեւցած — որով կը կարծէ արմատէն խելի Հայ յեղափոխական կազմակերպութիւնը, — կը շարունակէ յաջ և յաջիակ ձերբակալութիւններ ընել: Յիմար թիւրքը որ դարձ մ'ի վեր օգտուելով հայ ազգի թաւառութենէն իւր լրաժանեալ իտերեսցեալ միջոցներով յաջողած էր յանուն կրօնի երկպառակել հայերը և զանոնք՝ իւր խելքով յերկուս կամ յերկուս ազգաբաժանի, կը կարծէր ցարդ թէ յաջողած է իւր այս խաւարասէր փորձին մէջ և թէ իւր հայ կաթողիկ հաւատակները՝ հաւատարի մ' հայ ազգէն աւելի հաւատարի մ' են և պիտի մնան ընդ երկար իւր բռնապետական կառավարութեան՝ մոռնալով իրենց ազգայնութիւնը և ազգային ընդհանուր շահերը: Այժմ հակառակ կաթողիկ պատրիարք Աղաթանի վստահեցուցիչ յայտարարութեանց՝ նա կը տեսնէ թէ այս մասին մէջ ևս յուսախար եղած է և խեղճը իւր մոլեգնութենէն կը փրփրի և ինչ ընելիքը չգիտի: Այսպէս թուլով այն իրողութիւնները որք փայլուն կերպով կը հաստատուէ թէ ազգին բոլոր առ երևոյթ անջատեալ տարերք ազգային շարժման մէջ միացած են, բաւականանանք միայն պատմելով մի նորագոյն դէպք՝ իբրեւ ապացոյց թուրքաց վստահութեան բարձման հայ կաթողիկ ազգայնոց վրայէն: Ոնիկի պէյ Էսայեան անուն անձն որ փարիզէն ի Պոլսոյ կը վերադառնար, մի քանի օր յառաջ ձերբակալուեցաւ Սիբրէճի կայարանի մէջ, և վրան խուզարկուելով գտնուեցան մի քանի Ֆրանսական թերթեր որք Հայկական ինդոյ վրայ հաստատման կը պարունակէին. առոր վրայ ոստիկանութեան բանտը առաջնորդուեցաւ Աղաթանի պատրիարքը, թերևս կհանքին մէջ առաջին անգամն ըլլալով՝ համարձակեցաւ քաղաքական ինդոյով բանտարկուած անձի մը պաշտպանութեան համար Գրու երթալ. բայց ինքզինք և իւր հասարակութիւնը աշխարհաքաղաքական ազատեալ ձերբակալիւն որ ցարդ կը մնայ ի բանտի: Այս դէպքը նշան է մի կողմէ թէ կառավարութիւնը որքան խտրութիւն ի գործ կը դնէ՝ ամենաշնչին պատճառներով ձերբակալութիւններ ընելով, և կապալցուցանէ միւս կողմէ թէ Աղաթան կորուսած էր իւր ազգեցութիւնը կառավարութեան առջև, որպէս արդէն կորուսած էր ազգին առջև:

Յակոբ Վարդ. Պատրիկեանի և ուրիշ մի քանի ձերբակալուող վերաբերեալ թղթերը Ոստիկանութեան տունէն յանձնուեցան Արդարութեան պաշտօնատան. հարկ եղած ձեռնարկութիւնք աւարտած ըլլալով՝ մօտեցաւ հրատարակային դառը տեղի պիտի ունենայ Արդարագոյն Ստեփանի առջև:

Երրորդ զորաբաժնի (Կարնոյ) հրամանատար Մէհմետ Զէքի փաշա վերջերս բոլոր քիւրտ աշերէթները այցելել է և անոնց հաճութիւնը տեսի է, որով կառու վարութիւնը մտադիր է հեծելաբաշայ գունդեր պատրաստել այդ աշերէթներէն ռուսական և պարսկական ռազմաադիւրը՝ Հայաստանը և Կիլիկիան պաշտպանելու համար . այդ հեծելազորաց գունդերու ժամ յառաջ կազմութեան համար սովորանք իրադէ հանց . ամէն մէկ գունդ հազարական ձիաուորներէ պիտի բաղկանայ ասոր վրայ Ռուսական զէնքանը բողբոսի է, ասորկիւով թէ ռազմաադիւրաց վրայ ասանկ անկանոն զօրքեր գտնուիլը կրնայ պատճառ լինել խաղաղութեան խանգարման:

Կարծոյ տեղեկական Հիւպատոս Ք ի ի Փ օ ռ Գ Լ օ Ր ր  
մայրաքաղաքս եկաւ և տեղգրական դէպարնին Հրաւի-  
րանով՝ շաշատանի ընդհանուր վիճակին վրայ իւր  
տեղեկագիրը պատրաստեց . տեղեկագիրն Անդգրա ՊԵՐ.  
կոնցու խորհրդարանի բացման ատեն ներկայացուիլու  
համար Այստեղի պաշտօնական մարմնաց մէջ այնպէս  
լրբատուի թէ այս տեղեկագիրը հ ա յ ո յ ա ն ն ի պ ա ս տ  
է եղիւր Այս վերջին երկու կէտերը գրեցինք ո՛չ թէ այն  
պատճառաւ որ գիւտագիտական հարցեր կրնան  
հետաքրքիր գտիլ, այլ ընդհակառակն մի տեղամ ևս ցուց-  
նելու համար անոնց՝ որք իրենց յոյսը գիւտագիտութեան  
վրայ դրածնէ՝ թէ ո՛րքան կը խաբուին և ո՛րքան կը  
վնասին ազգային խնդրոյն՝ որուն յաջող լուծման ճանարիտ  
չաւիղն է ի ն.ք ն օ դ ն ու թ իւ ն և ա ղ զ ա յ ի ն  
յ ե ղ ա փ ո խ աւ թ իւ ն Այնչէ ցարդ չա՛տ խնդրեցին  
հայք որ Պերլլինի պատաստանող գաղնագրոյն խտրե ու  
կրտկ 61 դ յօդուածը պործադրուի . այժմ՝ այդ յօդուածի  
չգործադրուելն գատ՝ Թիւրքիա կը պատրաստուի  
դրամագծապէս անոր հակառակ ընթացք բռնել . հայոց  
վրայ հսկողութեան և պաշտպանութեան (այսինքն՝ ճնշման  
և հարստահարութեան) պաշտօն յանձնելով հոյն իսկ  
քաղաքաց՝ որոցմէ գաղնագիրը պիտի պաշտպանէր դմիդ .  
սա կը նմանի այն հովուին ընթացքին որ քայլերուն  
պաշտօն կուտայ գառները պաշտպանելու իսկ Անգլիա  
որուն պաշտպանութեան վրայ ամենէն աւելի յոյս կը  
ցնեն մեր գ իւ ա ն ա ղ Լ ա.ք՝ միևնոյն ժամանակ հայոց  
աննպաստ տեղեկագիրը կը պատրաստէ ի ձեռն իւր  
դէպարնին և հիւպատոսաց որք կործես վերջէրու կը  
մրցին տաճիկ պաշտունէից հետ գործոյ ընթացքն և  
իրականութիւնքը խնդաթիւրիլու մէջ:

Յոյց տալու համար թէ առ հասարակ եւրոպացիք  
միջան խոտորնակի կերպով կօծանդակեն մեր ազգային  
չարմանն և միանգամայն զգուշացնելու համար մեր  
ազգայինները՝ կը յայտնենք նաև թէ նոյն իսկ եւրոպա-  
կան նամակատունը — յարգելի բացառութեամբք — այս  
բաւական կարծես թրքական նամակատան մէկ մէկ  
մասնածիւղ դարձած են, այդ նամակատանց մէջ ալ  
լրտեսներ կը միտան, նամակներ կը բացուի, թիրթիր  
վար կը գրուին, յայտարարելով թէ փեսասկար են, չեն  
ամուսնար և չեն յիշեր այդ պարտենեայք թէ կը ծառայեն

յանուն այնպիսի պետութեանց որք զիրենք ազատասեր  
և հայասէր ցոյց կուտան: Վերջերս մանասնդ ուստական  
նամակտաւան մէջ նամակներ բացուած և գրառուած են,  
կը լսեմք նաև թէ Զուհաւասանի համրով մայրաքաղաք  
եկող նամակներն օսմանեան նամակաւան յանձնուելով  
անդ կը բացուին. վերջերս նամակներու այսպիսի  
բռնարարման շնորհիւ թուրք սուրիկանութիւնը մի քանի  
անմեղ անձեր ձերբակալած է. Մի քանի հայ սմրաւ  
տանեալք որք կը փորձէին վախտեամբ ազատել թուրք  
սնարդարութեան ճիրաներէն՝ անզգիական շոգհնաւով  
հարառնէլէն անցած ժամանակ՝ օսմանեան սուրիկանու  
թիւնը սնարդեւ շոգհնաւ մտնելով՝ ձերբակալեց այդ  
խեղճերն և Փրանսական Europe շոգհնաւով մայրա  
քաղաքս վերադարձաց և բանտարկեց: Այս անիրաւու  
թիւնը յատկապէս խնամով կը նշանակենք, որպէս զի  
ընթերցողք լաւ գտալապար առանձան օտարաց անտարբե  
րութեան ու վատութեան վրայ և զխնամ թէ հայերը  
որքան պէտք ունին իրենց յոյսը միայն իրենց վրայ  
գնելու:

Վատախառնությունը չբաժանվածաբար իր ներքին խառնվածքը ու ճնշումներով, այս վերջին ժամանակներս մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէ Հայոց երթեւեկներուն ճամբորդութեանց վրայ եւս Մի քանի ամէն ի վեր ճամբորդութիւն ընող Հայերը կը հարցաւքըննուին եւ հարցաքննութեամբ կենթարկւին Ասոր մէկ օրինակն յօդուածիս սկիզբը յիշեցինք արդէն Արեւիքեան ձերբակալութիւնն եւ Նաբալէյ Արբաղանի քանիցս հարցաքննուին եւս այս հանգամանաց վերադրելի են Այս միջոցիս արտասահման ճամբորդել ուղղով Հայոց մեծ զօւարտութեամբք եւ երկար հարցաքննութիւններէ վերջը միայն անօգիւր իր տրուի . զատառացեաց Հայրենիք վերադարձն տելի մեծ զօւարտութեանց կը բաղխի, մինչ քորդեր կը շարունակեն վերադառնալ Գաղամարիէ (Կորնթոսի պարանոց) վերադարձող անձ մը կը պատմէ թէ՛ ասկէ տմիս մը յառաջ՝ անց բանող մեցի Հայերէն խումբ մը անձինք Աթլէքէ օմանեհան Հիւպատոսարանէն անցադիր կը խնդրեն Հայրենիք վերադառնալու . հիւպատոսը կը մերժէ որով խեղճերը պարտաւորուած են օտարութեան մէջ զեղբիւր անպայման ժամանակ . զիտեմ թէ ի՛նչ է իրենց յանցանքը . . . Հոգ չէ, կատաժարութիւնը թող զրկէ Հայերն իրենց Հայրենիքը վերադառնալու իրաւունքէն ալ . Հայերը, եթէ իրօք անձնուրաց են, անոր ալ ճարը կը դառնեն եւ մի օր յազթական քայիերով կը մտնեն իրենց փափակելի երկիրը . . .

Հաստատ ազդիւրէ կը տնդեկանամք թէ իզմիրի մէջ թուրք տեղական կառավարութիւնը յանդգնած է սրբափայրի բանաբարութեան նոր զործողութիւն մը կատարել՝ իւր իսլամական միդիաանդութեան յազուրդ տալու համար, անշուշտ Էրդեմրամի գէպքին համը բերանը մնացած ըլլալով... Չգիտեմ՝ ինչ սնտոի պատահաւորանքներով՝ հայոց եկեղեցիյն կը խուսարկուի և թուրք ստտիկամը իրենց պիղծ ձեռքերով ամկն իրենն տակն ու վրայ կրնեն, կանադգեն ամէն ինչ որ քրիստոնէից համար

նորոգական է և ոչ ինչ գտնելով դուրս կհանն։ Անտի կերթան կը խողովակին ազգային վարժարանքն և հիանալիանոցը։ Ասոր վրայ հայր իրաւամբ գողութեամբ կը փակեն իրենց եկեղեցին և բարեգործական հաստատութիւնները։ Թերևս այն եկեղեցեաց փակմանէն ի վեր թուրքաց ծանր կուգար հայ եկեղեցեաց զանգակաց զգանջիւնը յսիւ, ուստի և կը ջանան անոնց ևս փակ ման պատճառ լինելը իզմիրի այս յուզմանց առթիւ րազմաթիւ ձերբակալութիւնք եղեր են։

Պատմեալ օսմանեան կառավարութեան մի քանի միջինայութիւնքն ու մատուցիւնքն ալ — այս կառավարութիւնը ոչինչ ունի գովելի, իսկ պարտաւելի և զգուշի բաներ այնչափ ունի որ պատմելով չվերջանար —

Կը լինեն ընթերցողք թէ անցեալները տաճիկ կառավարութիւնը կըրտպա գրկած էր արտաքին գործոց թղթակցութեան գիւտնի վերադառնալ և ասոր մամուլը գիւտնի տնօրէն Միւնիր պէյ անուն անձը, որպէս զի եւրոպական լրագրաց տնօրէնները կաշառելով դադարեցունէ նոցա ի նպատակ հայոց հրատարակութիւնները։ այս անձը իւր պաշտօնին մէջ ըստ մասնէ յաջողելով հանդիւր՝ անկաշառ լրագրաց անխորհրդապահութեամբն խայտառակ եղած էր։ Արդ այն այս պաշտօնեայն, կըրտպալէ վերադարձին՝ հետը տաւտուհինգի շափ եւրոպացի ինքնակոչ թղթակիցներ բերած է և անոնց ատաւ թռչակ սահմանելով և պատուանձան խոտաւանդով հայտատան և կիւրիկա գրկած է, որպէս զի անց սուտ լուրեր յերկրիւնով՝ եւրոպական կաշառարեկ լրագրաց հետադիրներ տան և տեղւոյն կատարել ալ անգործութիւնը և դառնի ու գալին ի միասին ճարակիւր հոշակին։ Այս խարերայ թղթակցած կարգէն է նշանաւոր Տանուսոյ որ ասկէ յառաջ սյապիսի պատուաբեր պաշտօն մը խիստ մեծ յաջողակութեամբ կը կատարէր ի կրկնէ։ մեր առած տեղեկութեանց նայելով՝ սա այժմ՝ Երզնկայի կողմերը կը գտնուի և Էրզրումի գրուած հետադիրներ կը յերկրէ։

Վերջիս մայրաքաղաքիս մէջ տեղի ունեցած ձերբակալութեանց մեծագոյն մասն ո՛չ թէ կասկածներու կամ մատնութեանց առթիւ են, այլ հայերը ահաբեկելու նպատակաւ կը կատարուին, ասանց հաշուելու թէ ճշդիւ հակառակը տեղի կունենայ և հայ ժողովրդեան զրգութիւնքը կը սաստկանան։ Այս ինչ կամ այն ինչ անձը ձերբակալելու պատճառ մ'ունենալու համար՝ կառավարութիւնը տանջանք և սպառնալիք բանտարկեալները կըստիպէ անոնց վրայ զրպարտութիւն ընել և յետոյ այդ զրպարտութեանց յենելով կը ձերբակալէ անմեղներ։ Այս մեքենայութեանց կարգին յիշենք նաեւ թէ, լրտեսները մինչև անգամ բանտերու ամենէն մթին խորշերը կը մտնեն։ Հառ անգամ հայ յիզափոխականներ կամ անմեղ արարածներ կը ձեւանան և ոտտիկանաց ձեռամբ շղթայակապ ու արհամարհ վիճակի մէջ կը ձգուին բանտ, հայ կալանաւորաց քով, և հոն կը իօսին իրենց կարճեցեալ քաջագործութեանց վրայ՝ որոց առթիւ իրր թէ զո՛հ եղած են և մատնուած չար կառավարութեան

ձեռքը։ անէ՛ծք և անյուր հայհոյանք կը ժայթքեն կառավարութեան դէմ։ Բայց մայ այն բանտարկելոյն որ խարտելով այդ պատիւ կերպարանքներէն ու կեզմիրներէն՝ իւր գաղանկը կը պարզէ։ այնպիսին ի կորուստ կը մատնէ զանձն և իւր ընկենեկը։ Բարեբախտաբար հայ յիզափոխականը միամիտ անձնիք չեն և իրենց բանտին ու տանջանաց մէջ ալ կը ձիւղոյն այս կեղտոտ մեքենայութեանց դէմ։ Տղային և արհամարական ձիւղաղով թիւրքական մի ուրիշ մեքենայութիւն ալ է միանգամ՝ բանտարկեալն արձակել իրբն անպարտ, այլ ի ծածուկ լրտեսել զինք թէ որո՞ց հետ յարաբերութիւն ունի և յետոյ թէ զինքն և թէ՛ իրեն հետ յարաբերութիւն ընելու յանցանքն ունեցողները ձերբակալել։

Սուքիսս դատաւանի սպանութեան փորձին առթիւ ի մահ դատապարտուած չորս հայ յիզափոխականաց սպառի՛ծը գեւ չէ գործադրուած և լրանուս համեմատ՝ դժուար թէ գործադրուի։

Պերճ .

Կ . Պօլիս 19 նոյեմբ . — 1 զեկ . 90 .

Հիմայ Պօլսոյ հայերը երկու մասերու կը բաժնուին՝ տաճիկ հաւք և հայք։ Գործը տաճիկ հայոց բաշտուած է, յաղթանակը իրենցն է։ Արդէն մատնութիւնը իրենց տրուած էր, ասոր վրայ ծանրացաւ զրպարտութիւն ընելն ալ։ Մեկքոն Պարոնեան անուն մատնիչը սպանաւ կըլլայ խրիմեանի և Նար Պէյի տանց խողարկութեան։ Սեպուհ ձիւղաճեան անուն մեկը միշտ ոտտիկանութեան գտն է։ ասոնց շնորհիւ ամեն օր նոր ձերբակալութիւններ կըլլայ։ Միսաքեան կարապետ անուամբ անձ մ'ալ աւելցիր է ասոնց վրայ՝ որ իւր պաշտօնին մէջ (զհայերը մատնելու մասին) հաւարտիմըլլալու համար «մեծ լրտես» «սէր հաֆիէ» անունը ստացած է։ Ասոնց պաշտօն ընդունենին իրենց խաղամուլութեանց շնորհիւն է քանի որ ոտտիկ նախարար Նադիր պէյն ալ լաւ խաղացող մ'է։ Հիմայ օսմ . Թղթատունը մեծ ծառայութիւն կը մատուցանէ իւր կառավարութեան։ Պօլսոյ նամակատան մէջ անիննայ նամակներ կը բացուին։ ասոնց հասցէները բաւ են ձերբակալութեանց առիթ տալու։

Հայր . . . .

Բանտեր՝ դատակարգէ պատուհան կան թղթակից մը մեզ Պօլսէն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ։

Բանտրի ձեռք որչափ գրիչ չվայելեր, բայց տեսնելով ազգի այսօրուայ վիճակ ու տառապանք, ևս ալ ուղեցի իմ գիտցած մէկ քանի տեղեկութիւններ տալ ձեզ։ Հոս բանաւորներու (ձերբակալելոյ) թիւ երթալով կաւեինայ . բայց ափսոս որ անուններ չեմ գիտեր որ յիշմ . մեծէն ու փոքրէն, հարուստէն ու աղքատէն և մեր բեռնակիր ու բանող եղբայրներէն շատեր կը բռնէ անգութ կառավարութիւն և բանտիւր կը լեցընէ։ Խմբման Հայրիկն ալ որ մեր աչքի լուսն է, որ Աստուծոց յետոյ մեր

պաշտած ու սիրածն է, այն էլ Ներուաղէմ կաթսորեն. ալ ինչ պիտի եղնի մեր վիճակ. ալ չենք կարող համբերել այս բաներուն. ողջ ողջ մեռած վիճակի մէջ ենք, բայց ապրիլ կուգինք, մարդու պէս ապրիլը Մեր երկրէն եկողներ ալ շատ գէշ կը պատահեն Տարօնոյ աշխարհի վիճակ. նաև թէ երկրէն պանդխտութեան դիմողներուն անցագիր շտրուիր, դրաւարտողական այլ և այլ տոբիքներով կը բանտարկուին, ուստի կըստիպուին խեղճ ու թշուառ մէջիք ընտելի ըստած զօրաց խմբերուն հետ խառնուիլ և գալ Պոլիս:

Այս վերջին օրեր եկողներէ լսեցինք որ Մշտ քաղաքին մէջ շատ անտանկի գէպքեր պատահեր են. Ս. Յարութիւն եկեղեցիի սրբապաշտութեան պատճառով կէս գիշերին մեծ կոխ մը պատահեր է վերին թաղի հայոց և թրքաց մէջ տեղ, 18 հայ եղբայրներ նահատակ են եղեր, շատեր ալ վիրաւորուել են. խանութներ գոց, գործեր դադարած, ընտանիքներ ու ճմիր (տղայ քներ) ամենքը ահի սարսափի մէջ են եղեր. վերջապէս Տարօնոյ երկիր թշուառութեան և միանգամայն արեան գուրմի դարձած է. մեր երկիր արիւն կը հոսի. մինչև երբ մեր արիւններ ցամաքած պիտի մնան:

Մուշէ եկած մէկ նամակէ կօրինակեմ հետեւալ գէպքեր ալ որ կը ցուցնեն մեր կարիճ գաշտեցիներու աստաթիկ տառապանք.

«Անցեալները վարդենիս գիւղացի Խալիֆի Յակօն և Սակի Պօղոսի որդի Ասիկը արտերին ջրելու համար դաշտ երթալով յանկարծ վրանեն յարձակող երկու բուրգ ձիաւորի պարպած հրացանով զարնուեցան. հրացանի գնդակը ուղղակի Յակոյի սրտին դախլով խեղդ մեռաւ. իսկ Ասիկի ազդրին դախլով՝ բաւական ժամանակ դարձան Սիկիի ազդրին դախլով. զէպքէն մէկ քանի օր յետք ընդհանուր դատախազը գալով գիւղս՝ յետ օրինական հարցաքննութեանց՝ Յակոյի դիակը գերեզմանէն հանել տալով վերքը դիտեց և վերադարձաւ իւր տեղ, առանց չարագործն երբ գտնելու հոգ տանելու:

Կը յիշէք արգէն մեր վարդենիս գիւղի ազգեկոտուր գէպքը որ տեղի ունեցաւ յուլիս ամսոյ սկիզբները. այդ գէպքի առթիւ գիւղիս գրեթէ բոլոր այրերը կամ բանտարկուեցան և կամ այլ և այլ գիւղեր ապաստանեցան. բանտարկեալներէն 40 անձինք երկու ամիսն արձակուեցան և 22 անձինք բանտարկեալ մնացին. այս վերջիններէն ալ եօթն անձինք ներկայ ամսոյ 17 ին արձակուեցան, և այժմ 18 անձինք ի բանտի կան Մուշէղէնցի երեք բանտարկեալներով մէկտեղ, և են հետեւեալք. Յարօ Գորգեհան, Պօղոս Կիրակոսեան, Յացօ Պետրոսեան, Մուրադ Յարկեան, Յովէ Խանաթիւհան, Երօ Մուրադեան, Ասօ Մուրադեան, Մհա. Յակոբ Մհա. Մեղքոնեան, Ներսէժ Մհա. Մեղքոնեան, Ալուոսի Խաչար, Բաթօ Դաշարդեան, Վարդան Հիօեան, Մարկոս Քօչեան, Խաչօ Ալօեան, Ասօ Գրօեան, Սարգիս Ամրոնեան, Պետրոս Մանուկեան. Ասոնց համար տեղւոյս կառավարութիւնը 15 տարի բանտարկութեան վճիռ տուած է. դատին յազմիքով ալ թղթերն գրկուած են Պօլիս վճարեկ

ատենին, ո՛վ գիտէ թէ հոն ի՛նչպէս վճիռ պիտի տրուի և թէ այդ թղթեր ե՛րբ պիտի ելնեն այնտեղէն, քանի որ հոսէ ինկնող մը չկայ:

Անան սկիզբները Բզոյի Մ. Սարգսի տղայ Բաօն ոչխարները արածելու ատեն վիրաւորուեցաւ քուրդերու հրացանով սրոց գնդակը ազդրէն դախլով՝ երկար ատեն դարմանուեցաւ. և հոկտեմբեր սկիզբները զիշեր մը ժամը ի տունները գիւղիս քանինները Աւետիսի սենեակը նստած խօսելու ժամանակ՝ յանկարծ երդիկէն զոյգ մը հրացան կը պարպուի որով կը վիրաւորուի քեաթիպ Խաօն և Բօլի Էլօն. Խաօն վիրաւորուած է ձախ կողմէն թիւ թեակ ըստած տեղի վարի կողմէն և Էլօն աջ ծնգէն և ձախ ձեռքէն. երկուքն ևս կը դարմանուին. Այս գէպքին առթիւ ևս կ'առաւարտուի թիւ թեալ ան փոյթ չկենալով՝ նախ միտիւրին և յետոյ ընդհանուր դատախազը եկան գիւղ, յետ սովորական հարցաքննութեանց՝ վերքերը դիտելով վերադարձան, առանց չարագործն երբ գտնելու հոգ տանելու:

Գիւղիս ներկայ վիճակը լաւ չէ. վերջին գիւղերէն ի վեր աղքատութիւն աւելի տիրած է. գիւղս հացի ոչ այնչափ, բացի անանոց դարմանի խիստ կարօտութիւն ունի. զի գիւղացիք չհամարձակեցան քաղել և քաղուածներն բերել. չհամարձակեցան քաղել նաև Մանկայ (քիւրդ գիւղ) սահմանին տեղի մօտ գտնուած ցորենի արտեր և եկեղեցւոյ արտերն. Այդ վնասուց որքանութիւնը և զօրաց գիւղս գալու միջոցին տեղի ունեցած վնասներն մի առ մի նշանակեալ ի ցուցակի հանրագրութեամբ կառավարութեան մատուցինք (դայն ուրախացնելու համար արդեօք...): Բայց ընդ փոյթ տնօրէնութիւն մը չընելով՝ չքաղուածները խօսի դարձան և տալու միտիւրին գալով կիսով չափ չվնասված ցորենները քաղել տալով բերել տուաւ միայն եօթ ուսլ ցորեն և խոտերն ալ մասամբ բերուեցան:

Գիւղիս բնակիչներէն Աւետիսեան Միսիթար, Եուշանի Գրիգոր և Մարգարի Տօնոն որ վարդենիսի գէպքին տեղի տուող մասնակցի քուրդաց հետ կռուած էին Մուշէղէնայ հարձը անոնց չհանձնելու համար, տակաւին անցաւ են. ո՛ր ըլլային, ողջ կամ մեռած ըլլային գիտցող չկայ:

Եւ այս ամէնը կը քաղենք միայն մէկ գիւղէ եկած թղթակցութիւնէ մը որ անշուշտ շատ ալ թերի է...

Ղարիպ.

## ՆԱԽԱԿ ԹԻՐԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

(Սեփական թղթակցից)

Քարբերդ 16 Նոյեմբեր 1890.

1890, հոկտեմբերի 10 ին բիրդ աղաներէն Էհիւ աղա անունով անձը 15 — 0 հոգով կու յարձակի Տէրախու գաւառներէն Մազկերաու Երրտա անունով գիւղը կողակտելու և գիւղին մէջ գտնուող հայ երեւիներէն Պօղոս Բէլիայ անունով անձը գինու հարուածով կո,

գարնին կը սպաննէր: Տեղուն կառավարութեանը կը տրուէր զի ԳԵՐԻ կը լինէր խեղճ հայերը քանդի կառավարութեանը կարող չէ թիւրդերուն վրայ բռնութիւն բանեցնելու, նամանակաց սպանուողն ալ հայ ըլլալուն համար երբէք տրված բողոքներուն կարեւորութիւն չի տրվի քանդի հա հայ մը մեռեր է հա հա մը մեռեր է տարբերութիւն չընէր անոնց առջև . ուրախ կը լլան որ հայ մըն ալ պակսեց:

Սուրբայի գիւղին Սարգիս անունով հայ երիտասարդ մը թերեւս ամիս ու կէս առաջ... իւր հայրենիքը օրափոխութեան եկած լինելով, ամսուս 16 ին իւր գիւղէն ելլելով քաղաք կու գայ. երբ կու մտնի քաղաք, կու տեսնէ որ բէժիի գողճիին մէկը հայ երիտասարդ մը տակը ցրդելով հեծիւր պողպատի կու խեղճէ իւրիւ թէ թութուն կը փնտռէ տղուն վրայ. հոն ներկայ կու գտնուին լատմը տաճիկներ որ սէլիւ կանեն: Խեղճ Սարգիս տղէն գողճիին կըսէ թէ՛ ի՞նչ կու գիտ ադ տղուն մընէ. եթէ գուն ուրիշ քաղաք մը կամ Հալապ (Հալէպ) ըլլայիր, քեզի շատ մը բաներ կանէին. հիմա գո՛ճ եղիր որ Զիմիկազակու (Սմիկազակ) մէջ ես գտնուէր, ինչ որ ընէս քեզի կու ձեռնայ: Հոտ տեղ ներկայ գտնուող տաճիկները և Զէլէտիէ Բէլիւի. Այդ աղան տոտ խօսքը յաճնելուն պէս հրաման կընեն տաճիկներուն թէ՛ զարկէք տոտ անիւրաւ տղան սպանեցէք: Փաղաքին մէջ որքան որ տաճիկ կու գտնուին, տղուն գլուխը կու ժողովուն անշափ կու գարնին որ խեղճ աղան մոլորած գետին կու փոռնի քաղաքին մէջ: Ատ աղուն չի գտնող տաճիկ չէ մնացէ՛ր իւրիւ թէ ով որ չի գտնէ նզովեալ կու սեպի տէյին՝ հասնողը կու գարնէ: Խեղճ հայերը օգնութեան անկարող լինելու համար ոմանք մէկ կողմը քալուելով, ոմանք իր խանութին ներսի տին մտնելով ախ ու վախ կանեն. ով որ մօտէնա առ հարուածը ինքն ալ պիտի ուտէ: Խեղճ հայերը լոկի մեջիկ կու կենան իւր տեղերը. իւր տղան շնաստատ գետին փոռեցաւ, տաճիկները կարծելով թէ միտաւ, կու ցրդին փողոցը մէջ կանցնեն իրենց գործուն կերթան: Ի վերջոյ հայերը կու գան՝ խեղճ Սարգիսը ձիու մը վրայ կապելով կու զրկին իւր տունը:

Այդից հինգ օր վերջը յիշեալ Զէլէտիէ - Բէլիւի. Այդ աղան և հետը գտնուող երեւելի քանի մը անձներով շուկաներուն մէջ կու պոռան թէ՛ «պու կատըլարի քէսմալի» - հասարակութեան կըսեն թէ հայերը կը տրեցէք, զարկէք, ջարդէք: Հայերը այս իմանալով մէկ երկու օր իրենց խանութները գոցելով կերթան առաջ նորդատուն խորհուրդ ընելու. առ վտանգին առաջը աննկու կը ստիպուին Փարսիքի վալիին լուր տալու: Վալին ալ առ լուրը աննկուն պէս կու հրամայէ «խոգաթի» մուխտասարիֆին թէ Զիմիկազակ առանկ խնդրի մը հրահանգ տուողները բռնելով հանցանաց համեմատ պատիժ կրել տալ Սակայն թերեւս մութա սարիֆէ բան մը չը տեսնուեցաւ. ոչ մարդիկը բերուեցան, ոչ քննութեան ներքե տաճիկացի: Հայու խնդիր մը ուր որ ըլլայ, հետեանք չի ելլեր առ անօրէն պաշտօնեաներու առջև:

Վահրամ:

ՆԱԽԱԿ ՌՈՒՍ - ՏՈՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՑ:

Կաղզվան I—13 նոյեմբերի 1890.

Կաղզվանը միանգամայն ալէկոծեալ դրութեան մէջ է. ամեն օր յուզում, ամեն օր տխուր դէպքեր են կրկնուում: Սեպտեմբերի 28 ին լուր է հասնում այստեղ թէ «աւազակային խռամբը» մօտակայ լեռներում տապա տակութիւններ է անում: Անմիջապէս մի քանի վաշտ զօրք զիմում է այդ լեռները «աւազակային» բռնելու: Զօրքերը վրայ հասած ժամանակ կարծեցեալ «աւազակային» եղբ մորթած խորոված են անելիս լինում խառ գիւղում, որը գտնվում է Կաղզվանից դէպի հիւսիս 3-4 վերստ հեռաւորութեան վրայ: Արաքսի ափին Այդ «աւազակային խռամբը» կու կռնեաւ և իւր ընկերներն են՝ «հայ ապստամբ» կան մի խռամբ: Զօրքերը յանկարծակի հասնելուն պատճառով մի մասին հազիւ է յաջողվում փախչելու, միւսները բռնվում են: Այդ ժամանակ երիտասարդներից մէկը հրացանը արձակում է գաւառապետի օգնականին սպանելու նպատակով, բայց տարաբախտաբար վրիպում է. սպանվում է մի կողակ, տակայն ինքն էլ գնտակահար է լինում: Փաղջողներից 3 հոգի քարավէժ լինելով մեռնում են: Ապստամբների դիակները տրված էր կեղեքեցու պարտէզում: Հոկտեմբերի 1 ին կարճատև օրած ներին բերին, որոնք առանց քացատութեան հայ են և երիտասարդ, գիակները ցոյց տվին և հարց ու փորձ արին՝ արդեօք ճանաչում են, իրենց խմբիցը, ընկերներից չե՞ն: Մի քանիներից մէկի մասին ստացան հետեւեալ ցուցմունքը. — մենք նրան պատահեալ ենք օֆիցերի հագուստով, իսկ թէ ինքը ո՞վ է, ի՞նչ մարդ է այդ մասին մեզ ոչինչ յայտնի չէ: Կու կռնեանը նոյն անձի մասին հետեւեալ ցուցմունքը տվեց — նրա անունն է Սարգար և նա միացած է եղել ինձ հետ. անցեալից ոչինչ տեղեկութիւն չունենմ:

Այդ Սարգարը Սիւրբից փախած նախկին տաղակ էր, որը Ալեքսանդրօպօլ. Դիլիջան ճանապարհի վրայ ասպատակութիւններ էր անում և սարսափ էր տարածել այդ շրջանում: Բայց վերջին ժամանակներումս ևնթարկվելով ընդհանուր հստանքին, միանում է կու կռնեանի և նրա ընկերների հետ Տաճկահայաստան գնալու նպատակով: Յաջող օրը Սարգարին և իւր ընկերին պատուով թաղեցին. վերջինի ով լինելը յայտնի չեղաւ:

Այնուհետև սկսեցաւ մանրամասն քննութիւն: Մի քանիսները պատասխանեցին որ իրենք ճանապարհէին բռնում էին և կողակները իրենց բռնեցին. միւսները՝ թէ հայրենիք էինք գնում գործով և բռնվեցին: Մի ժամանակ նութիւնը, որանց հետ և՛ կու կռնեանը, և մի ծեր լուսաւ նկար և մի գիմնագիտ յայտնապէս առաջին՝ որ Տաճկահայաստանը այրեան դաշտ է դարձել, որ իրենց եղբորցը մորթում, խորովում են, որ իրենց քոյրերին տնապատում... և որ իրենք գնում են օգնութեան հասնելու իրենց եղբորցը, գնում են իրենց արիւնը նրանցի հետ խառնելու:

Կուկուռնանի մօտ գտնվել է գանդան տեղերից նամակներ ծածկագրերով և մի գրքոյ՝ «Արեւադ»։ Ծածկագրերը յայտնել է կարգաւոր, որովհետեւ նա իւր հետ է ունեցել այդ ծածկագրերի բանալին։ Կամակները բովանդակութեամբ մասին լսվում է որ անմեղ են։ Բիւնների մօտ ոչինչ չեն գտնված։

Այս գէպից մի քանի օր յետոյ լուեցաւ որ զարմալ նոր նոր խմբեր են անցնում սահմանը, Շրջանապետն այս լուրը առնելուն պէս զօրքով դիմում է լեռները նրանց կարմատորիւ նպատակով, բայց երկար թափառելուց յետոյ ոչինչ չգտնելով «քիթը կախ» յետ է գտնում։

Կոյներից 7 ին լուր հասաւ որ սահմանների մօտ «տա- ղակները» 5 մարդ են մտրվել։ Պաշտօնական անձինք՝ պր- կուրը և թարգմանը անմիջապէս գնացին «կոկոնագոր- ժութեան» տեղը գործը քննելու։

Ստացայ ասել որ՝ ձերբակալւածներից մէկը՝ Հայի Կարապետը, որ տառջնորդում էր այդ խմբին գէպի երկրի խորքը իբրեւ տեղեակ, սկսում է պրօպագանդա անել նոյն խակ ժամդարմի օֆիցերին պատմելով Հայոց պատմութիւնից շատ կտորներ և նկարագրել վերջին գէպերը՝ նրան օգնորելու և գրգռելու նպատակով։ Իրանով նա մի և նոյն ժամանակ ցոյց է տվել որ այդ շարժումը կատարելապէս գիտակցական է, որ իրենք գիտեն թէ «ինչ» են անում, որ նրանց «չեն քշում», այլ գիտեն թէ իրենք ուր են գնում և ինչու համար։

Կատարութիւնը ամեն միջոց գործ դրեց իմանալու Ռիտ շքուրդօր մի հաստատութիւն, մի ընկերութիւն որ դրանց թէ գրգռում և թէ օգնում, միջոցներ է տալիս, բայց ոչ մի հետեանքի չհասաւ, որովհետեւ միշտ պա- տասխան էր տաւանում՝ «մենք ինքներս ենք մեղ օգնում և գիտենք թէ ինչ ենք անում»։

Ամայս 18 ին Ղարսից յատկապէս քննիչ եկաւ և գործը նորից քննեց։ Հետեանքի մասին ոչինչ յայտնի չեղաւ։ Օ ին բանտարկեալներին տարան Ղարս։ Այդ օրը դեռ լուսածագին ամբողջ սկսեց խոնվել բանտի առաջ Փողոցների և Խանիքների վրայ խոնված էր օրիորդների, կանանց և տղամարդկանց բողոքութիւն։ Համը տաւին բանտարկեալներին դուրս բերին և չորս չորս կապելով իբրեւ ոճրագործն երի ճանապարհ ձգեցին։ Ժողովուրդը հետևում էր նրանց, բանտարկեալ- ները սկսում են երգել «Մեր Հայրենիք» երգը, բայց առաձեռնաւորը լռեցնում է։ Տեսարանը խիստ սրտաշարժ էր, ժողովրդեան աչքերի մէջ նկատելի էր արտասուքի կաթիլներ...

Այդ շարժումները տեղական ժողովրդի վրայ սգեւորիչ տպաւորութիւն թողեց. նա լարված դրութեամբ հետևում և հոգով ու սրտով սիրում է «Սուրբ բորձը»։ Բանտար- կեալներին նրա հասցրած օգնութիւնը՝ բանտարկւած օրից մինչև մնաս բարեւը՝ պարզապէս ցոյց էին տալիս որ ժողովուրդը ոչ թէ միայն համակրում է, այլ և սիրում է, ամեն օր առաւտութեամբ ուղարկում էր նրանց՝ միս, փլաւ և այլ կերակուրներ, հաց, գինի, միք և քաղցրա- վիւրք, փող ու ծխախոտ...

Քաջատութիւն են կազմում՝ քաղաքի գեպտատուր, և երեւի ի դուր չէ գեպտատու, որը խիստ ստեղծ է ժողովրդին և միանգամայն զգաւոր է պատճառում իւր ստորութիւններով և վասակութիւնով, ու քաղաքապա- ները, որոնք հարաւոր տարիկաններ են, և «քունջ ու պոճախում» պոսկիլ փնտրողները...

Հայերի հետ խառը ապրում են տաճիկներ և յոյներ, վերջիններս մէջ յայտնի է հաղի- Եօրը Հայերին իբրեւ ամենառիւսիմ թշնամի խիստ հայատեաց են և պաշտօնեանները, որոնց թվում՝ շրջանապետ Գրաչով, նրա օգնական Կուկուռնի որ թիւրք է և պրիստա Սամարկին։ Այս պիտոյնները՝ հետևում են տաճիկան սիսակմին. — Թիւրքերին տուել են հրացան, իսկ Հայերը մինչև իսկ խենթար (սուր) կրելու իրաւունքն չունեն... Հայերը յագգած են այս շինովներին գէպ։

### Հայ. Տաճիկաստանցի.

Մի գ. հաղորդում են հաստատ աղբիւրից որ՝ Պետերբուրգից խիստ հրաման է ուղարկված Կովկասեան կառավարչութեան հետևելու ամենայն խստութեամբ Հայ յեղափոխականներին։

### Պ Ա Տ Ս Ս Խ Ա Ն Ն Ե Ր .

Թ. քաղ. Թո — ին. — Չեր հասցէն մեղ յայտնի չէ որ «Հնչակներ» ուղարկենք։ Սպասում ենք Չեղնից նամակի որոշ հասցէով։

«Կուսակցութեան» Գանձարանում» շնորհակալ- թեամբ ստացված է՝ հետևեալ գումարներ. —

Բաւլարիայի Բուր. քաղ. Թ — ից 20 Ֆր., Լուս. ից՝ 18 Ֆր., Ուն. եղբայրներից՝ 5 Ֆր., Բ. Գա. — ից՝ 20 Ֆր., Անցիլ՝ 10 Ֆր., Իսլիմայ քաղ. Թ. Մ. Զ. ից՝ 80 Ֆր., Ոսկերիչ Խ.՝ 20 Ֆր., Սիլիսարիա. — Ա. Մ. ից 10 Ֆր., Զ. Յ. ից՝ 10 Ֆր., Ֆիլիպով. քաղ. Արաքս. Արցախի ձեռքով՝ 100 Ֆր., Եդիպատս Ա. քաղ. 25 Ֆր., X. քաղաքից՝ Տ. Ա. ից՝ 8 օսմ. ոսկի. Ծ. քաղ. — Տիկին Գ. Ա. միջոցով՝ 100 ր., Ա. Տ. Ա. և Ա. Մ. Ա.՝ 10 րուր., Կ. Տ. — Ա. ից՝ 10 ր., Սար. քաղ. — Գ. ի միջոցով՝ 16 ր., Տու... քաղ. Լ. Ա. ից՝ 100 րուր., Եդիպատս Սպինքս՝ 31 Ֆր., Ժ. քաղ. Բ. ից՝ 10 Ֆր.:

Յօդուածներ, Թղթակցութիւններ, տեղեկութիւններ և տրամ ուղարկել հետևեալ հասցէով.

Montpellier (France) — M. Beniard. Poste Restante. (25).

Լօղոն. Հայկական Աշատ Տպարան.